

ման, դրանց տես. և սորտային կազմի կենսբ. առանձնահատկությունների, լեռն. ու նախալեռն. շրջ-ներում պտղատու այգիների հիմնադրման և այլ խնդիրների:

*Երկ.* Հայաստանի վայրի պտուղները, Ե., 1959 (համահեղինակ): Տեղական ծագում ունեցող խնձորենու տեսակային և սորտային կազմը Հայկական ՍՍՌ-ում, Ե., 1960: Պտղաբուծություն, Ե., 1976 (համահեղինակ):

**ՄԱՐԳԱՐՅԱՆ** Արշալույս Հակոբի (ծ. 18.4.1914, Թիֆլիս), բանաստեղծուհի: Ավարտել է ԵՊՀ (1936): Հեղինակ է ժամանակակից մարդու խոհերն արտահայտող քնար. և մանկ. բանաստեղծությունների մի շարք գրքերի («Ձնձողիկներ», 1947, «Հայրենի հովիտ», 1958, «Հեռատաններ», 1962, «Երբ սիրում ես», 1970, «Դու ինձ սպասում էիր», 1975, «Արտամետի այգի», 1984, «Տիկնիկի կոշիկը», 1985, «Փոքրիկ հովիվը», 1989): Նրա «Ծիածանները Բիայնա ծովի» (1989) և «Ծաղկած ծիրանի» (1990) ժող-ներն ընդգրկում են ազգ-հայրենասիր. և խոհ. բնույթի բանաստեղծություններ:

**ՄԱՐԳԱՐՅԱՆ** Բենիամին Եղիշեի [29.11 (12.12).1913, Շուկավեր (այժմ՝ Շահումյան ավան, ՎՀ Մառնեուլի շրջանում) – 30.9.1985, Երևան, թաղված է Բյուրականում], աստղագետ: Ֆիզմաթ գիտ. թեկնածու (1944), ՀԽՍՀ ԳԱ ակադ. (1971): ՀԽՍՀ գիտ. վաստ. գործիչ (1961): Մ.Ե. Մարգարյանի եղբայրը: Ավարտել է ԵՊՀ (1938): 1942-ից աշխատել է Բյուրականի աստղադիտարանում. 1953–56-ին՝ տնօրենի տեղակալ, 1956–85-ին՝ գալակտիկաների ուսումնասիրության բաժնի վարիչ: 1943–56-ին դասավանդել է ԵՊՀ-ում: Աշխատանքները վերաբերում են աստղային ու արտագալակտիկ. աստղագիտության հարցերին: Մասնակցել է աստղերի բաշխման մեջ դիտվող ֆլուկտուացիաների տեսության մշակմանը՝ հաշվի առնելով միջաստղային կլանումը: Դիտողական տվյալների հիման վրա հաստատել է, որ աստղասփյուռները լայնանում են: Մշակել է հատուկ մեթոդ, որի հիման վրա, 1965-ից Բյուրականում սկսվել է երկնքի սպեկտրային շրջահայտությունը: Հայտնաբերել է սպեկտրի ուլտրամանուշակագույն տիրույթում ճառագայթման ավելցուկ ունեցող գալակտիկաներ, որոնք աստղագիտության մեջ հայտնի են Մարգարյանի գալակտիկաներ անվամբ (տես *Ակտիվ գալակտիկաներ*): ԽՍՀՄ ԳԱ աստղագիտ. խորհրդի անդամ (1964), Միջազգ. աստղագիտ. միության «Գալակտիկաներ» հանձնաժողովի փոխարեգիդենտ (1973–76), պրեզիդենտ (1976–79): ԽՍՀՄ պետ. մրց. (1950):

*Երկ.* Флюктуации в видимом распределении звезд и космическое поглощение, «Բյուրականի աստղադիտարանի հաղորդումներ», պր. 1, 1946; Атлас звездных скоплений различных типов, М., 1953; Галактики с ультрафиолетовым континуумом, Астрофизика, 3, 55, 1967; On the Na-

ture of Galaxies with UV Continuum Having Broad Emission Lines "Astronomy and Astrophysics", 58, 139, 1977.

**ՄԱՐԳԱՐՅԱՆ** Էդուարդ Աբրեսի (ծ. 26.6.1933, Կիրովաբադ), քիմիկոս: Քիմ. գիտ. դ-ր ((1982), պրոֆ. (1984): Ավարտել է ԵՊՀ (1957): 1957-ից աշխատում է Ա.Լ.Մնջոյանի անվ. նուրբ. օրգ. քիմիայի ինստ-ում: Աշխատանքները վերաբերում են սիրտանոթային համակարգի վրա ներգործող նյութերի, մասնավորապես, արիլալկիլամինների և դրանց չզուգորդված հետերոցիկլային ածանցյալների սինթեզին և հետազոտմանը: Առաջինն է հայտնաբերել ուլտրաձայնի ազդեցությամբ կրկնակի կապի տեղում և էպօքսիդային օղակին ամիններ միացնելու հնարավորությունը:

**ՄԱՐԳԱՐՅԱՆ** Էդուարդ Սարգսի (ծ. 24.12.1929, Երևան), փիլիսոփա: Փիլ. գիտ. դ-ր (1968), պրոֆ. (1984): Ավարտել է Մոսկվայի պետ. միջազգ. հարաբերությունների ինստ-ի իրավաբ. ֆակ-ը (1953): 1958-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ փիլ-յան և իրավունքի ինստ-ում: Գիտ. ուսումնասիրությունները վերաբերում են մշակութաբանության առանցքային հարցերի, մարդկային հասարակության՝ որպես կյանքի համակարգի յուրահատուկ բաղկացուցիչ մասի համակարգային հետազոտության, բնական ու հաս. գիտությունների փոխազդեցության, տարածաշրջանային գոյապահպանման ֆերային էքսպերիմենտի հիմնավորման, գոյատևման ու զարգացման ստրատեգիական հիմնախնդիրների քննությանը: Մ-ի գիտ. գործունեության հիմն. ուղղություններն ունեն նաև որոշակիորեն արտահայտված ազգ. ասպեկտներ, որոնք արտացոլվել են «Կենսաապահովման մշակույթը և էթնոսը: Էթնո-մշակութաբանական հետազոտության փորձ (հայ գյուղական մշակույթի նյութերով)» (1983, ռուս., կոլեկտիվ մենագրություն), «Ռեգիոնալ էկոլոգո-նոոսֆերային էքսպերիմենտի գաղափարի հիմնավորումը և համակարգային-օպտիմալացնող էկոլոգիական հետազոտությունների ծրագրի կոնցեպցիան (Հայկական ՍՍՀ-ի օրինակով)» (1986, ռուս.) ուսումնասիրություններում: «Համաշխարհային ստրատեգիական կառավարման ունակությունը: ՄԱԿ-ի համակարգի առաջիկա բարեփոխումը էվոլյուցիոն գոյատևման հրամայականների տեսանկյունից» մենագրությունը (1998, անգլ.) նվիրված է հայ ժողովրդի գոյատևման ու զարգացման խնդիրների համակողմանի քննությանը՝ համաշխ. քաղաքակրթության դիմադրական համատեքստում:

Մ. 1994-ին Երևանում ստեղծված Գոյատևման ու զարգացման ռազմավարությունների մշակմանն աջակցող միջազգ. ասոցիացիայի նախագահն է:

*Երկ.* О концепции локальных цивилизаций, Е., 1962; Очерки теории культуры, Е., 1969; Вопросы системного исследования общества, М., 1972; О генезисе человеческой деятельности и культуры, Е.,



Բ. Ե. Մարգարյան